

Հաստատված է՝

ԵՄԽՀ-ի գիտական խորհրդի

Գիտխորհրդի նախագահ՝

Ա.Ս.Աղաբաբյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ

Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն կանոնակարգը սահմանում է համալսարանի մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և գործունեության կարգը:
- 1.2 Մեթոդական խորհրդի կանոնակարգը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:
- 1.3 Մեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

2. Մեթոդական խորհրդի կարգավիճակը և կազմը

- 2.1 Համալսարանի մեթոդական խորհուրդը համալսարանում ուսումնամեթոդական և գիտամեթոդական հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ԵՄԽՀ-ում տարվող ուսումնական և գիտական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:
- 2.2 Մեթոդական խորհուրդը ներառում է 7 կամ 9 անդամ, որոնք հրամանագրվում են ռեկտորի կողմից երեք տարի ժամկետով:

3. Մեթոդական խորհրդի խնդիրները

- 3.1 Համալսարանի մեթոդական խորհուրդը համակարգում է ֆակուլտետների մեթոդական խորհուրդների աշխատանքները:
- 3.2 Քննարկում և երաշխավորում է՝
 - 3.2.1 ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը,
 - 3.2.2 գործող և նոր բացվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,
 - 3.2.3 պետական կրթական չափորոշիչները,
 - 3.2.4 դասավանդման նոր ու առաջավոր մեթոդներն ու եղանակները,
 - 3.2.5 ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի և ուսանողների գիտելիքների գնահատման ռեյտինգային համակարգի ներդրումը,
 - 3.2.6 այլ բուհերի, կրթական հաստատությունների հետ ուսումնամեթոդական և գիտամեթոդական համագործակցության հարցերը,
 - 3.2.7 այլ ուսումնամեթոդական, գիտամեթոդական հարցերը:

4. Մեթոդական խորհրդի աշխատակարգը

- 4.1 Մեթոդական խորհուրդը պարբերաբար, երեք ամիսը մեկ, հրավիրում է նիստեր, որոնցում քննարկում է իր իրավասությանը համապատասխան հարցեր և առաջակություններ ներկայացնում ռեկտորին կամ գիտական խորհրդին:
- 4.2 Մեթոդական խորհուրդն իր անդրանիկ նիստում ընտրում է մեթոդական խորհրդի նախագահ և քարտուղար:
- 4.3 Մեթոդական խորհրդի նախագահը ղեկավարում է մեթոդական խորհրդի ընթացիկ գործունեությունը և վարում նիստերը, իր ստորագրությամբ վավերացնում մեթոդական խորհրդից ելնող փաստաթղթերը:
- 4.4 Մեթոդական խորհրդի նախագահը մեթոդական խորհրդի ընթացիկ աշխատանքների մասին զեկուցում է ռեկտորին կամ գիտական խորհրդին:
- 4.5 Մեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից:
- 4.6 Մեթոդական խորհրդի նախագահն ու քարտուղարը իրենց պաշտոններում մնում են մինչև մեթոդական խորհրդի ժամկետի ավարտը, եթե հարկադրական փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:
- 4.7 Մեթոդական խորհուրդը հարցեր է քննարկում ռեկտորի առաջարկով, գիտական խորհրդի որոշմամբ կամ իր պլանի համապատասխան:
- 4.8 Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք ներկայացվում են աշխատանքային պլանին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:
- 4.9 Մեթոդական խորհուրդն առաջակություններ և եզրակացություններ է ներկայացնում ռեկտորին կամ գիտական խորհրդին:
- 4.10 Մեթոդական խորհրդի նիստերն իրավագոր են, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:
- 4.11 Մեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:
- 4.12 Մեթոդական խորհրդի անդամներն իրավունք ունեն խորհրդի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք: